

ՊԱՅՄԱՆՔ

Տարեկան գին և. Պոլսոյ համար 8 ՄԷԸ.
Պաշտպանաց 40 ՄԷԸ.
Վերականգնող և. Պոլսոյ 4 ՄԷԸ.
Պաշտպանաց 3 ՄԷԸ.
Իւրաքանչիւր թերթի գին 60 փրդ.
Պատկերներն տողը մէկ անգամի հա-
մար 3 զուրուշ, երկու անգամի հա-
մար 2 զուրուշ, աւելի անգամներու
համար զամ սակարկութիւն կըլլայ:



ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՂԳԱՅԻՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ



ՊԱՅՄԱՆՔ

Իւրաքանչիւր թերթի գին 60 փրդ.
Պատկերներն տողը մէկ անգամի հա-
մար 3 զուրուշ, երկու անգամի հա-
մար 2 զուրուշ, աւելի անգամներու
համար զամ սակարկութիւն կըլլայ:

ՊԱՅՄԱՆՔ

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Հէրոսէքէն ու Պոնտիայէն եկած վերջին լուրերն ապստամբութիւնն իւր վախճանին մօտեցած կը համարին: Մէկ կողմէ Բ. Նիքոն ձեռք առած զօրքով միջոցներն և միւս կողմէ դուրսէն հետզհետէ օգնութիւն գտնելու անյուսութիւնը՝ սրտաբեկութիւն ձգած են ապստամբաց փրկւոյ, որով զենքը վար դնող և հրնազանդութիւն յանձն առնողներուն թիւն օր քան զօր կաւելնայ, հապառակ քանի մը բաղդախնդիր ապստամբապետաց ջանքերուն, որք ամեն հնարք և միջոց ի գործ կը դնեն դաւաճութիւնն արգելելու և ապստամբութիւնը ժամանակ մ'աշարունակել տալու համար:

Փարիզի Գուռիէ տը Ֆրանս լրագիրը կը ծանուցանէ թէ Հէրոսէքի ապստամբաց համակրութիւն յայտնող Լորտ Իրքըրի նամակն հրատարակող թայմիլ թերթն ապստամբաց ձեռքը հասեր է, և Սինպլիվաթիւն ապստամբաբանին ձեռքը թարգմանութիւնով նախ ապստամբաց բանակին մէջ և յետոյ Գարատաղացոյ առջև կարդացուեր է՝ կարծեցեալ համար թէ Անդրիա պաշտպան և ձեռնուռ է ապստամբաց:

Այս ամեն միջոցներով հանդերձ, ապստամբութիւնն օրհասական վիճակի հասած կերելի, և մեծ յոյս կայ որ քիչ օրէն կատարելագոյն դրսործած ըլլալուն լուրն ստանանք:

Վիեննայի Գուռիստիտան ժեշնէնալ լրագիրն հետեւեալ խօսքերն ալ կը հաստատեն այս կարծիքը:

« Ինչպէս որ պէտք էր սպասել, ապստամբաց դատը պաշտպանող թերթերը՝ քանի որ Պոնտիայէն ու Հէրոսէքէն եկած ապստամբական լուրերն յաղթութիւն չեն աւետեր, հարեւոյ՛ն կը դուրսնան: Ասանց խօսքին նայելով, թրքայինի պաշարուն մը մատնութեամբ վերցած է, Տիւզէի վանքը մատնութեամբ ինկած է թուրքաց ձեռքը, և մատնութեան շնորհիւ է որ Մոսթարի մէջ հիւսիս-արևմտայ խորհուրդն սկսած միջոցին՝ թուրքերն ապստամբութեան վրայ յաղթանակած են:

« Այս պարագայից մէջ հաւանական է որ ապստամբաց խիստ կատաղիներն յաղթեն իրենց այն ընկերներուն՝ որք գործին խաղաղական վախճան մ'ունենալուն հակամէտ են, հետեւաբար դժուարին ըլլայ Օսմանեան հպատակաց իրենց դանդաղներն ու խնդիրներն համաձայնութեամբ ներկայացնել Մոսթարի յանձնաժողովին: »

Թայմիլ լրագիրը Շանկայիէն սեպտ. 6 թուով եկած հետեւեալ հեռագրաւորը կը հրատարակէ:

« Կըսուի թէ Անդրիայի Մարկարի դեղապետին սպանութեան պատճառաւ Անդրիայ և Չինաստանի մէջ ծագած վէճն հետեւեալ կերպիւ կարգադրուեր է. 1՝ Չինաստանի կառավարութիւնն յատուկ դեսպան մը պիտի ղրկէ Անդրիա. 2՝ Մարկարի դեղապետն սպանող Երևանցիները պիտի պատժէ և անոր ընտանեաց դրամական հատուցում պիտի տայ. 3՝ Երևանէն մինչև Պիրմանիա առևտրական ճանապ մը պիտի բանայ. 4՝ Բէքիւնի մէջ տուրք հաւաքելու եղանակը պիտի կանոնաւորէ: »

ՎԵՐՋԻՆ ԼՈՒՐԵՐ

Փարիզ 13 սեպտ.

Մօնթէլէի վրայ դարհուրելի փոթորիկ մ'իշխելով 50 տուն կործանեց: Սրգէն 9 դիակ դատուեցան, և 60 հոգի ալ անյայտ եղած են:

Վիեննա 13 սեպտ.

Կայսրուհին շարժք օրը Սասթօի մօտ ձիէն ինկաւ և պահ մը մարած մնաց: Իտալեացիներու այս գէպը գէշ հետեւեալը մը չունեցաւ: Անկումն պատճառեալ ստոտիկ գլխացտը չուտով դուրսեցաւ, և արդէն Ն. Վէնիսիաութեան ընդհանուր վիճակն այնչափ լաւ է որ կըցաւ անկողնէն ելնել:

Բեռլին 13 սեպտ.

Երէկ իրիկուն Կայսրը ճանապ ելաւ ի վախճան երթալու համար:

Պէրս 13 սեպտ.

Միւսն իշխանն երէկ իրիկուն Գրաւիւն-Վալցէն վերադարձաւ:

Չէրին 13 սեպտ.

Քանի մ'ապստամբապետը եկան աղաչեցին Նիքոն իշխանին որ զէնքով մատնացուցէ ընէ Հէրոսէքի ապստամբութեան: Գարատաղի կառավարութիւնը Սերվիոյ ընկեր որոշման սպասելով վճռական պատասխան մը չտուաւ:

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Կայսերական հրամանաւ՝

Արդարութեան բարձր. Ատենին Մուհաքէմիսթի ճիւղին անդամ Եշնիլէ-հիւրի ի պարահիմ պէյ՝ Պոնտիոյ դաւաճութիւն քաղաքին կառավարիչ անուանեցաւ՝ առաջին պաշտօնն ալ վրան մնալով, և այս առթիւ Պալայի տոտիճան բարձրացաւ:

Սանայի նախորդ կառավարիչ Հագփի փաշան ճիտտէի կառավարիչ անուանեցաւ:

Պոնտիայէն սեպտ. 10 թուով Գէրիք Մէհմէտ Ալի փաշային առ զինւորական նախարարութիւնն ուղղած մէկ հեռագրին հետեւեալ լուրերը կուտայ:

« Պրանայի Օսմանեան իշխանու-

թեանց մէկ հեռագրէն կիմանանք թէ Զօրճիյուտ դեղին բոլոր բնակիչները՝ բացի չորս ընտանիքէ՝ Գայմազմին եկեր, և հնազանդութիւնն յանձն առնելով իրենց տուները դարձեր են:

« Պոնտիոյ երկրացոյցին վրայ ակնարկ մը ձգուած ժամանակ կը տեսնուի որ վերայիշեալ դիւղը Գարատաղի սահմանագլխի գծին վրայ է: Հետեւաբար բնակիչներուն դալ և հնազանդութիւն յանձն առնելու ապացոյց մ'է թէ Գարատաղի կառավարութիւնը կատարեալ չէր դուրսէն կը պահէ և ապստամբութիւնը չքայլուեր: Նմանապէս Սերվիոյ քաղաքային և զինուորական իշխանութեանց ներկայ ընթացքը նշկատելով՝ յայտնի կը տեսնուի որ Սերվիոյ ալ օգնութիւն չտար ապստամբաց: Իմըրլիսիսի մէջ խաղաղութիւնը կատարեալ է, և զօրքերս միշտ պատրաստ են դիմել որ իրենց ներկայութիւնն հարկաւոր ըլլայ:

« Վաղ առաւօտ զօրքերս Եանիէյի վանքին վրայ պիտի երթան, որ ապստամբաց վերջին սպաստանն է: Այս վանքին առնուելէն և տաճկաբնակի Բէրիպոյ գիւղին և վանքին մէջ տեղը գտնուած քանի մը կէտերու դարձումէն ետեւ՝ ապստամբաց և Սերվիայի կամաւորաց մէջ հազար գահկուցութիւնները բոլորովին պիտի կտրին: »

Հոկտեմբերի կտրօնին վճարման վրայ քանի մ'օրէ ի վեր տիրած կասկածը, կըսէ Լէվրէթ Հէրբլա, Օսմանեան Պանքային հետ եղած քանակցութեանց յաջող դարձումը մ'ստանալուն շնորհիւ մեծ մասամբ փարատեցաւ: Փոխառութեան գլխաւոր կէտերուն վրայ արդէն Բ. Դուռն և Պանքան համաձայնած են, հետեւաբար մեծ յոյս կայ, կըսէ, որ մինչև հիմա գործին գլուխ ելնելուն արդեւք եղող դժուարութիւնները բոլորովին անհետանան:

Երէկ, Վիէ. Սուլթանին ծննդեան տարեդարձն և միանգամայն Պէրսի կէճէսիի տօն ըլլալով, արքունական նաւերը դուրսանելով դարձաւորուեցան և գիւղերն ալ լուսազարդութիւն կըդաւ:

Այս պատճառաւ տէրութեան պաշտօնարանները դոյր էին երէկ:

Լէվրէթ Հէրբլա լրագիրը կը ծանուցանէ թէ Պարսից կառավարութիւնը՝ 1873 ին Բ. Դրան արտաքին գործոց նախարար Բաշիտ փաշային խմբագրած և Պարսից դեսպանէն ընդունուած դաշնագրութեան ծրարագրէն գժգժ ըլլալով՝ չընդունիր, և նորէն կը պնդէ որ Պարսկաստան

ալ առևտրական քաղաքական և դատական կէտերու մէջ Եւրոպական տէրութեանց համահաւասար վիճակի մէջ ճանչուի թուրքայէն:

Կըսուի թէ Մուսթաֆա Փաղի վաշային հիւանդութիւնը ծանրացեր է:

Հանկայի (Կիրիս) Յունաց աղջկանց վարժարանին աշակերտուհիներն Յունաց Պատրիարքին միջոցաւ քանի մ'առեղծագործական աշխատութիւններ նուիրած ըլլալով Բարձր Մայր Թագուհոյն, Նորին Բարձրութիւնն 250 լիւրա շնորհեց յիշեալ աղջկանց բաշխուելու համար:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ

Ինչպէս որ Կիրիսի կուսակալը տեղեկութիւն տուած էր Բ. Դրան, դաւաճին ընդհանուր ժողովոյն դուրսարման առթիւ կղզոյն քրիստոնէայ հասարակութեան երեսփոխաններն՝ իրենց խնդրեալը՝ Վիէ. Սուլթանին ուղղեալ աղերսագրի մը մէջ նշանակած էին:

Աղերսագրին նպատակն էր խնդրել որ կղզոյն կաղմական կանոնադրութեամբ չնորհուած առանձնաշնորհութիւնները կատարելագոյն գործադրին:

Վիէ. Սուլթանն՝ իւր ամեն հպատակաց համար ընդհանրապէս ունեցած բարձր հոգածութեամբ պատրաստ է միշտ ընդունիլ անոնց այն խնդիրն որ հաւատարմութեան պարտոյց համեմատ լըլայտնուին, և այն հայցուածն են՝ որ անոնց բարեկեցութիւնն ապահովուի նպատակն ունին Բ. Դուռն ալ հանապաղ Վիէ. Սուլթանին վեհանախական դիտաւորութիւններէն ներշնչուել կայսերական հրամաններ կընդունի միշտ:

Այս արամագրութեամբ կայսերական կառավարութիւնը վերայիշեալ աղերսագրին պարունակութիւնը ըստ արժանայն քննելէ ետեւ՝ որոշեց թէ Կիրիսի կղզոյն կաղմաւորական կանոնադրութիւնը հաստատող կայսերական հրովարտական արդէն կրեացուց շնորհուած առանձնաշնորհութիւնը անվճար կը մնան: Եւ թէ նոյն կանոնադրութեան հարմարութիւնները իրականացուի քործադրութիւն կ'ստանան կայսերական շնորհներն յիշեալ ժողովրդոց վայելել տալով, շնորհներ, որք վերջին ապստամբութեան երեսին յիշեալ ժողովրդոց կըրած վնասներն անհետացնելու նպատակն ունին:

Նախարարաց խորհրդին այս որոշումը՝ Վիէ. Սուլթանէն հաստատուելէ ետեւ՝ որոշ հրահանգներով Կիրիսի կուսակալին հաղորդուեցաւ: պատուէր դրուելով միանգամայն որ հասարակութեան ծանուցանէ, և

աճախորդաց և այս քաղաքիս ընդհանուր
նք լերոյիլեալ երկու ընկերութեանց մի-